

«Սկիզբէն մինչեւ վերջ՝ պաշտպանութեան համար ամենադոյզն երեւոյթ իսկ չկար :

«Այնպէս կ'երեւի, թէ առաջուց վճիռը տրուած էր, եւ դատաւարութիւնը սոսկ պաշտօնական ձեւակերպութիւն մըն է» : (Թում Նիվիքըն, «Կապոյտ Գիրք» քիւ 3, 1892—93, քիւ 153 Յուլուար 13, 1893) :

Թուրք կառավարութիւնը, ինկիւրիի դատը վերջանալէ յետոյ միմիայն վճիռներն արձանագրեց : Անոնցմէ հինգը մահուան դատապարտուեցան, որոնց մէջ էր Թորոս Մառուկեանը :

Հակառակ իր ուրացումներուն՝ Մառուկեանի վիճակուած ճակատագիրը նախապէս արդէն յայտնի էր, քանի որ ամիսներ առաջ, իր հաւատարիմ զինակիցը յաւէտ իր արկածախնդրութենէն դիմով՝ քան թէ յեղափոխական պարտականութիւններ ստանձնած ըլլալու գիտակցութենէն՝ անխոհեմութեամբ Տերեվանքի վանահայր Դանիէլ Վարդապետին գրի առնել տուած էր Թորոսին եւ իր գործունէութեան մանրամասնութիւնները :

ՍՈՒՐԷՆ ՍՈՒՐԷՆԵԱՆ

Բ.— ՊԱՏԿԵՐՆԵՐ ՁԵԼԼՈՅԻ ԿԵԱՆՔԷՆ

Ձեւոյի ձգած համբաւը իր ծննդավայրի սահմաններէն դուրս ելած է եւ մտած՝ հայ ազատագրական պատմութեան մէջ : Ան ճանչցուած է իբրեւ արդարութեան եւ իրաւունքի պաշտպան հայ հերոս մը : Մենք հոս կը ներկայացնենք, Կիւրինցի Թորոս Մառուկեանը, անոր Կիւրինի կեանքէն եւ դործելակերպէն դրուազներ, խիստ հետաքրքրական, որոնք հաւանաբար յիշուած չըլլան իր կատարած հերոսութիւններու արձանագրութեանց մէջ :

Իր ժամանակակիցներու պատմածին համաձայն, Ձեւոյի հերոսական ասպարէզը կը սկսի Կեսարիոյ մէջ, երբ վաճառքի հանուած զտարիւն արարական նժոյգի մը իբրեւ «դնորդ» կը ներկայանայ : Ձիուն գինը մինչեւ յիսուն թրքական ոսկիի կը բարձրանայ եւ մունետիկը լուր կու տայ Թորոսին, որ իր վրայ մնաց : Թորոսը իր կեանքին մէջ այդպիսի դուժար ունեցած չէր դրպանը :

Մունետիկին կ'ըսէ, որ դրամը տալէ առաջ, ինք «պէտք է որ ձին հեծնէ եւ փորձէ անգամ մը» : Մունետիկը այդ պատեհութիւնը կու տայ... : Թորոսը ձին հեծած՝ շուկային մէջ պահ մը վեր-վար քշելէ ետք կը բացականչէ... —

— Ահաւասիկ յիսուն ոսկին դնաց... :

Եւ կայծակի արագութեամբ քաղաքէն դուրս ելլելով կ'անհետանայ : Այդ օրէն կը սկսի Ձեւոյի ասպարէզը, թրքական անիրաւութիւններուն եւ ոտնձգութիւններուն դէմ պայքարի ուղին :

Բարձրաբերձ Արճիհաս լեռը Ձեւոյին եւ իր ընկերոջ Կիւլպէնկին թաքստոցը կը դառնայ : Թուրք կառավարութիւնը չէր գիտեր անոր ինքնութիւնը, բայց Կեսարիոյ մէջ առեւտրական ճիւղեր ունեցող Կիւրինցի վաճառականներ լա՛ւ կը ճանչնային զինքը : Յաճախ կ'իջնէր քաղաք, ունէր լաւ յարաբերութիւններ եւ կապեր :

Ամէն անգամ որ ծպտուած վիճակով Կեսարիա կը մտնէր խորհրդաւոր պատգամ մը ունէր անոնց տալու. իր պատգամը կը հաղորդէր վաճառական

կարապետ Խանդատեանի եւ անոր միջոցաւ ալ միւս վաճառականներուն : Պատգամն էր — «Ըսէ Կիւրինցի եւ միւս հայ վաճառականներուն որ այս շաբթու բաստայով դրամ չըրկեն...» : Այս ըսելով կամացուկ մը կ'անհետանար : Նոյն շաբթուան Բաստան զարնուելուն լուրը կ'առնէին... Թուրք կառավարութիւնը կուսած էր որ Կեսարիոյ հայ վաճառականները Չելլոյին ինքնութիւնը գիտէին, սակայն կարելիութիւնը չունէր սպացուցանելու :

1895-ի ջարդէն երեք տարի առաջ Թորոս Կիւրին կու գայ ամուսնանալու նպատակով : Թուրք պաշտօնեաներուն ուշադրութիւնը կը դրաւ անոր ձիուն արտասովոր կենդանի մը ըլլալը եւ տակաւ առ տակաւ կասկածները կը գորանան : Տեւապէս կը սկսին դադոնորէն հետապնդել թէ ո՞վ է եւ ո՞ր տեղէն եկած է : Այս պարագան ըջորէն Թորոսին կը հաղորդեն որ օձիքը ձեռք տակ առաջ Կիւրինէն հեռանայ, կամ առնուազն հրապարակի վրայ շատ չի տեսնուի եւ միշտ պատրաստ վիճակի մէջ դռնուի անոնց հետ ճակատելու : Սակայն ինքը ըլլալով մեծասիրտ եւ ինքնալստահ, ինչպէս յատուկ է քաջի մը համար, կարեւորութիւն չի տար :

— Եղբայր, սա երկչոտ նապաստակներն ալ մարդու տեղ կը դնէք, սոսնց հարիւրը փարա մը չ'արժեր... : Ու կը շարունակէ շուկային մէջ ազատ համարձակ շրջագայի :

Շատ չանցած օրին մէկը երբ խանութի մը մէջ նստած իր սուրճը խմելով կը խօսակցի, քանի մը ոստիկաններ ոստիկանապետի ընկերակցութեամբ ներս կը խուժեն եւ երկու թեւերէն բռնելով բանտ կ'առաջնորդեն : Ինքը ձերբակալելէ անմիջապէս վերջ կը սկսին իր ձին փնտռել, որպէսզի անոր «Ձելլօն» ըլլալը վաւերացուցած ըլլան : Հայերը, այս եղելութենէն ընդվզած, երկու մարդ կ'որոշեն, որոնք ձին գիշեր ատեն քաղաքէն դուրս հանելով մէկուսի վայր մը կը տանին եւ պատկառազգու կենդանին ակամայ սպաննելով կը թաղեն...

Չելլոյի կենսադրութեան հետ կապուած կը մնայ ուրիշ քաջի մը անուր, որ Չելլօն ազատելու ջանքին մէջ ինքը դո՛հ դնաց : Սիրանոսեան ձանօն նոյնպէս Կիւրինցի քաջարի յեղափոխական մը, տեղեակ ըլլալով որ Թորոսը Սերաստիա պիտի փոխադրուի հոն դատուելու համար, Կիւրինէն երեսունը հինգ մղոն հեռու գտնուող կամուրջի մը տակ կը սպասէ, ակնկալելով որ անսպասճառ այդ տեղէն պիտի անցնին : Ճանապարհին իրեն կ'ընկերանայ Նշան անունով մէկը առանց տեղեակ ըլլալու թէ ձանոյին նպատակը ի՞նչ է :

Թուրք կառավարութիւնը երբ կ'իմանայ թէ Չելլօն ազատելու ծրարի մը յղացուած է, ճանապարհը կը փոխէ. միեւնոյն ատեն զինուորներ եւ ոստիկաններ զրկելով ձանոյին թաքնուած տեղը կը գիտնայ : Չինուորներուն եւ ոստիկաններուն հետ կը համախմբուին մօտակայ գիւղերէն շատ մը չէրքէզ եւ թուրք ձիւորներ եւ ձանօն պաշարման տակ կ'առնեն : Գնդակները կը սկսին ձանոյի գիրքին վրայ տեղալ :

Նշան կոչուած ամսեղուկը այս տեսարանէն սարսափած, կը սկսի ազատել ձանոյին որ անձնատուր ըլլան եթէ ոչ երկուքն ալ պիտի սպաննուին, բայց ձանօն առանց անոր խօսքին կարեւորութիւն տալու կռիւը կը շարունակէ :

ձանօն պաշարող խուժանին մէջէն չէրքէզ աւագակ մը, որ ձանօն լաւ կը ճանչնար, թուրք զինուորականներուն կ'ըսէ որ եթէ անոր նժոյզը իրեն տալ խոստանան ինք կրնայ ձանօն պատրուակով մը սպաննել : Թուրք զինուորականները կը խոստանան :

Աւագակ չէր քէզը խուժանէն բաժնուելով կը սկսի դէպի ճանոյն դիր-
քը յառաջանալ մինչեւ որ անոր կը մօտենայ եւ կը ձայնէ «Ճանօ, այսչափ
բարձրութեան դէմ մինակդ գլուխ չես կրնար ելլել. թող որ քովդ դամ եւ միա-
սին դիմադրենք...»: Ճանօն չուզելով առաջին հերթին չէր քէզը սպաննել
զնդակը կը ձգէ ճիշդ ոտքին առջեւը իբր ազդարարութիւն որ ետ երթայ:

— Ճանօ, զիս չե՞ս ճանչնար, քեզի օգնելու կու դամ... կը պնդէ չէր-
քէզը:

— Են այստեղ ոչ մէկ մարդ կը ճանչնամ, կը պատասխանէ Ճանօն,
եթէ քայլ մը եւս առաջ գաս զնդակը կուրծքէդ կ'ուտես:

Չէր քէզը կը շարունակէ յառաջանալ: Երբ Ճանօն գէնքը կ'ուղղէ անոր,
այս անգամ սպաննելու նպատակով, Նշան կոչուած տմեսղուկը գէնքը ձեռքով
վար կը դարնէ եւ չէր քէզին ուղղուած զնդակը զուր կ'անցնի: Իսկ Չէր քէզը
արձակած զնդակը Ճանօյի կուրծքը ծակելով անկենդան դետին կը փռէ
դայն...: Ճանօյի յիշատակին ձօնուած է թրքերէն երգ մը, որուն մէկ տու-
նին մէջ տրուած է հերոսին կերպարը եւ վատութիւնը «Ճանօթ» չէր քէզին:

Պինէր խոխմ դըր աքըմըն իւստիւնէ,
Ալըրտըմ մարթիմիմի տէստիմէ.
Պէշ եիւզ աքլը վարամատը իւստիւմէ,
Քէտօր օլսուն, գրըլսըն օ գալըմ չէրքէզ,
Աքեշլիբէ եանսըն օ գալըմ չէրքէզ:

Հինդ հարիւր ձիւտոր դէմ դալ չիւրցան
Երբ կ'առնէի վար հրացանս ուսէս կախ,
Կուրանայ թող, թող կտրտի այն չէր քէզն անդութ
Կրակներու մէջ թող այրի այդ չէր քէզն անսիրտ:

Չեւլլօյին դատավարութիւնը սկսելէ առաջ Սեբաստիոյ մէջ գտնուող
Կիւրինցի վաճառականներէն Արարեան, Մակարեան, Մարանեան, ամէն
ջանք կ'ընեն դրամական միջոցներով Չեւլլօն անպարտ արձակել տալու հա-
մար: Անոնք 300 թրքական հնչուն ոսկի տրամադրելով 200-ը դատաւորին
կաշառք կու տան, իսկ 100-ն ալ Չեւլլօն լաւ ճանչցող եւ անոր ստուգութեանը
վկայող հազարապետին: Դատը շահած կ'ըլլային եթէ Չեւլլօն, իր մեծախօ-
սութեամբ ինքզինքը չդատապարտէր:

Դատը տեսնուած պահուն երբ Չեւլլօն դատաւորին առջեւ կը բերեն,
ան կը նայի փոքրակազմ, կարճահասակ ամբաստանեալին եւ «հեղնական»
չեչտով մը կը հարցնէ — «Չեւլլօ տէտիքլէրի պո՞ւ մը տըր» (Չեւլլօ ըսուածը
սո՞յս է) եւ կը սկսի «յոռետեսութեամբ» մը գլուխը ճօճել...:

Երբ հազարապետը վկայութեան կը կանգնի դատաւորը կը սկսի հար-
ցաքննել:

— Դուն Չեւլլօն տեսա՞՞ծ ես. դայն լաւ կը ճանչնա՞ս:

— Այո, տէր դատաւոր, կը պատասխանէ հազարապետը:

— Այս մարդը Չեւլլօն է:

— Ոչ, տէր դատաւոր: Չեւլլօն յաղթանդամ հսկայ մըն է. անոր հասա-
կէն մարդ կը կախուի... Այս վճիտ արարածը ինչպէ՞ս Չեւլլօն կրնայ ըլլալ...
Դատաւորը հազարապետին վկայութեան հիման վրայ կ'ըսէ:

— Գացէք, գացէք, անփորձ պատանի մը բռներ բերեր էք եւ «Չելլօ» կը կոչէք:

Այս խօսքերը լսելէ վերջ, առանց ըմբռնելու թէ դատաւորն ու հազարապետը թատերգութիւն մըն է որ կը բեմադրեն, թորոս իր արժանապատուութիւնը վերաւորուած կը դրայ, չկրնալով հանդուրժել իր դէմ եղած այս «ճաղրն» ու «հեզնանքը», ստքի կանգնելով կը բացազանչէ:

— «Իչտէ, Չելլօն ես եմ: Եթէ չէք հաւատար, նժոյզս եւ զէնքս տուէք, Սվազի ամբողջ բանակը դէմս թող ելլէ...»:

Հազարապետը կացութիւնը փրկելու ձգտումով մը ամբաստանեալը սնապարծ սովորութեան տէր մէկը ցոյց կու տայ: Բայց այս անգամ թորոսը խօսքը հազարապետին կ'ուղղէ:

— Ես չէ՞ի, որ դուն քու զինուորներովդ երբ մեր դէմ ելար՝ քաջ մարդ մը ըլլալուդ՝ կեանքդ խնայելով միայն սրունքէդ վերաւորեցի: Քեզի չ'ազարարեցի՞, որ եթէ անդամ մըն ալ դէմս գաս, գնդակս կուրծքիդ կու դայ:

Եւ ինքնութիւնը լրիւ ապացուցած ըլլալու համար, թորոս քանի մը անգամ բռնաւն գարկած ըլլալը փաստող թուականները կը թուէ:

Ասոր վրայ հազարապետը կը գունատի, իսկ ապշահար դատաւորը ուրիշ միջոց չ'ունենար եւ թորոսին կախազանի վճիռը կ'արձակէ...:

ՇՈՒՂՈՒԼՑԻ

Գ.— ԹՈՐՈՍ ԾԱՌՈՒԿԵԱՆ — ՉԵԼԼՕ —

«...Եւ սես թորոս Ծառուկեանը», «Հայրդին», ՍԻԱՄԱՆԹՕ

Թորոս Ծառուկեան ծնած է Կիւրինի մէջ, 1870 թուին:

«Երկար ու նեղ հովիտի մը գերկը ներկայացնող Կիւրինը կը գտնուի Սեբաստիոյ նահանգային շրջանակին մէջ, որուն ծայրը կը հասնի մինչեւ Կիլիկիոյ սահմանները», կը գրէ յայտնի գրագէտ Ս. Մ. Ծոյրիկեան: «Կիւրինի շուրջ կան Ալալիստանը, Ազիզիէն եւ Ասլան Թաշը: Ունի հին բերդ մը, մասամբ աւերակ, մնացած Հռոմէացիներու տիրապետութեան շրջանէն»:

Հայերու դբադումները եղած են, գլխաւորաբար, առեւտուրը, երկրագործութիւնը, գորգաշինութիւնը: Անոնք ցոյց տուած են ճարպիկութիւն եւ ձեռներէցութիւն, որոնց շնորհիւ տիրացած են թէ անտեսական լաւ պայմաններու, եւ թէ տիրական դիրք գրաւած առեւտրական հրապարակի վրայ:

Կիւրինցիներու համար կըսուի, որ եղած են զօրաւոր կամքի տէր անհատներ, այնպէս որ, շուտով տեղի չեն տար, կը պնդեն իրենց ըսածին վրայ, եթէ սխալ իսկ ըլլայ: «Արեւմտահայ Աշխարհ» հատորի հեղինակը կու տայ այս մասին քանի մը օրինակներ, որոնցմէ մէկը ահաւաստիկ.—

«Երկու Կիւրինցիներ, ճամբորդութեան մը միջոցին, հեռուէն կենդանիի նմանող մարմին մը կը տեսնեն, որ սարին վրայ կեցած էր անշարժ: Անոնք կը վիճարանին իրարու հետ, առանց զիտնալու, թէ էպէս ի՞նչ է իրենց տեսածը: Մէկը շարունակ կը պնդէ թէ տեսածը թուշու մըն է: Միւսն ալ կը պնդէ, թէ անիկա այժ մըն է: Ու վերջապէս քարեր կը նետեն կենդանիին վրայ, որ կը սկսի թռչիլ: Առաջին կիւրինցին, յաղթականօրէն, կը յայտարարէ թէ արդարեւ իր ըսածը ճիշդ էր: Իսկ երկրորդը կ'ըսէ՝ «Թո՛ւ է՛յ՝ այժ է»: